

ՄԱՍԻՍ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 3

16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իմաստասիրական ծանօթութիւնը

Գրամը 1862 կ'ընեն

Մայրը

Ֆերսինան Պրիւնքիւն

Ինքսաի «Ներաւխարհ»ը

Սարսուն Սիւրս

Նոր Գիւրքեր

Գրական եւ Վերաբուժական

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Ե. Ա.

50 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

1906

UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

THE LIBRARY

OF THE

STATE OF NEW YORK

ALBANY

1877

NEW YORK

1877

NEW YORK

1877

ՏՈՒԹ. ՅՈՎԱ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ժողովրդային Առողջաբանական Հրատարակությունները

Մանչերու բնամին	5	դր.
Կես-բժշկական խօսակցություններ	5	դր.
Թոֆախի վրայ կենսական ծանօթություններ	60	փրյ.
Մանչերու բարեկամը (բարգ.)	60	փրյ.
Կեդրոնացեղի՝ Պալենց Գրատուն, Կ. ՊՈԼԻՍ. (3—10)		

ՅՈՎԱՆՆԷՍ ԷՍԿԻԵԱՆ

Գրատան անունը՝ կը

բաւէ ապահովելու

համար գրեմական

պէտքերուն հետեւները թէ՛ անկա լրումն է ուղղամտութեան, հեղապա-
նութեան եւ արագութեան: Կը բաւէ անգամ մը գլխով՝ համարելու
համար այս մասին: Հասցէն է՝ Խորասանձեան Խան, թիւ 33: (3—10)

PHOENIX ASSURANCE Ltd. Co.

“ՖԻՆԻՔՍ,”

ՀԻՄՆՈՒՄԻ ԼԵՆՏՈՆԻ ՄԻՋ 1782 ԻՆ

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ԿԷ ԳՈՐԾԷ 1869 ԷՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ԸՆԿ.

Գրանագրուիս եւ պանեսի գրամ

Անգլիական ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է,
ծանօթ իր պատուաւորութեամբ եւ վնասներու մէջ իր անմիջական
վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովադրէ հրդեհի եւ կայծակի դէմ ամէն տեսակ ան-
շարժ եւ շարժուն ստացուածք խիստ նպաստաւոր պայմաններով:

Ընկերութեան նշանադրանք եղած է.

ՈՒՂԱՍՏՏՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՎՆԱՄՆԵՐՈՒ:
Յարդ վճարած է 27,000,000 անգլ. ոսկիէ աւելի:

Ընդհանուր գործակալ Պալտայ եւ գաւառներու.

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիքտորիա խան, Պանֆ Օքսֆորդի մօտ, Ղալաթիա:

Փոխ գործակալ Պալտայ

ՃԻՎԱՆ ԹԷՔԷՆԱՆ

Ֆնագրեան խան

(3—10)

3-Յ ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՄՐՑԱՆԱԿ ՄԸ

Հաստատած ենք գաւառական գործակալներու միջեւ, զոր կրնայ շահիլ ո՛ր եւ է փութաջան գործակալ: Այն անձը կամ գործակալը, որ մինչեւ Փետրուարի վերջը ամէնէն բարձր թիւով բաժանորդը կը գտնէ, և ամբողջովին կը հասցնէ մեզ բաժանորդագիրն, կը ստանայ 3 Օամ. ոսկի: 30է վար թիւ մը չընդունուիլ այս մրցումին համար: Այս բաժանորդներէն ամէնքն ալ իրաւունք ունին ստանալու մեր պարգևները ճիշտաբար (սեւ պարգևաւոր բաժանորդագրութիւն): Ո՛ր եւ է գաւառական անձ կրնայ շահիլ այս պարգևը: Պէտք չկայ ստանալու 30 բաժանորդին լրանալուն՝ արդէսպի գործակալ մը գտնանք ամբողջովին զբիւլ կմրադրութեամբ: Կրնայ պարբերաբար զբիւլ իր բաժանորդները, յիշելով միշտ իր անունը, և երբ մեր տամարին մէջ լրանայ 30 թիւը՝ անմիջապէս կը ստանայ 3 Օամ. ոսկին: Մրցանակը շահողին անունը՝ ընտելութեամբ տեղով՝ պիտի ծանուցուի Մասիսի մէջ: Մէկէ աւելի 30 թիւը անցնողներ՝ ամէնքն ալ պիտի ստանան նոյն պարգևը: Մրցանակին գումարը կը բարձրանայ 4 ոսկիի՝ երբ գործակալ մը կ'ընդգրկէ 40 թիւը, և 5 ոսկիի՝ երբ 50 ըլլայ թիւը: Եւ շարունակաբար: Սահմանը ընդարձակ է: Օ՛ն, ուրիմն, զէսկի ամէնէն բարձր թիւը:

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ տղգային, զրտկան և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր: Հասցէ՝ Դպրութիւն, Փամառնոս փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ՌԵՐՍ, ՄԵՆՉ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 290

Կալամա-Սէրայի Լիսէին դէմ


ԴՇ. ՆՇ. ՇՐ. օրեր կամուխ առսուրնէ մինչեւ իրիկուան ժ. 11½

ԲՇ. ԴՇ. ՈԼՐ. օրեր 6էն մեկչեւ 11½

Կիրակի օրեր ժամագրութեամբ

5 ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՊԱՐԳԵԻ ՄԸ

Մինչեւ Յունիարի վերջը Մասիսի որ եւ է մէկ էջին մէջ, գրութեամբ մը մէկ անկիւնը պիտի գետեղուի քանի մը տողով ծանուցում մը, որ պիտի ծառայէ ընթերցողին ցոյցելու թէ, ինչպէս կարելի է շահիլ 5 Օամ. ոսկիի պարգևը: Այդ երկուողը գրութեամբ մէջէն ճիշդ գտնող և ստալին անգամ հասցէին ներկայացնողը՝ պիտի ստանայ 5 Օամ. ոսկի: Երկուողին մէջ ընթերցողը լիովին պիտի տեղեկանայ 5 ոսկին ի՞նչպէս և ո՛ւրիկ գտնուելուն: Ամէն ընթերցող կրնայ շատ դիւրաւ գտնել այդ տողերը գրութեամբ ներառն մէջէն: Կը բառէ միտին ու շաղիր կարգալ բոլոր գրութեամբները:



ԽԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՔԻԻ 3

16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

Հրատարակելու առիթով Ս. Յ. Պետրոսյանի Ա. յօդուածը, հաճոյքով կը հաղորդենք թէ անիկա սկզբնաւորութիւնն է շարքի մը՝ իմաստասիրական տեսութիւններու վրայ:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԾԱՆՈթՈՒԹԻՒՆԸ

Ծանոթութիւնն իր աստիճաններն ունի: Նախ կայ պարզ փորձառական ծանօթութիւնը, որ ռամկենն է և է ճանաչողութիւնը մի որ և է իրողութեան կամ իրողութեանց խումբի մը առանց պատճառին գիտութեան: Այսպէս ռամկիր փորձառութեամբ գիտէ թէ ամսեր կը զուարտւին, կ'որոտայ, կ'անձրեւէ, երկրաշարժներ կ'ըլլան, հրաբուխներ կը պայթին, եւայլն, առանց գիտնալու թէ ինչո՞ւ, ի՞նչպէս, ի՞նչ երևոյթներու հարկաւոր կապակցութեամբ: Ծանոթութեան երկրորդ աստիճանը գիտական ծանօթութիւնն է, և այս է պատճառներուն կամ օրինաց հասողութեամբ բացատրուած ծանոթութիւնը, այսինքն երբ ծանոթութիւնը կը լրացուի ճանաչողութեամբ այն երևոյթներուն, որք առեալ երևոյթը կը կանխեն, կը զուղենթանան կամ կը հետեւին ա՛նոր՝ բնութեան անյեղլի կարգին մէջ: Ծանոթութեան երրորդ ու բարձրագոյն աստիճանը փիլիսոփայական կամ ինստասսսիրական ծանօթութիւնն է, որ է գիտութիւնը առաջին պատճառներուն և առաջին սկզբանց, կամ, որ նոյնն է, բացարձակին: Այլ և այլ գիտութիւնք կը ծանոթացնեն մեզ իրողութեանց երկրորդական կամ անմիջական պատճառները և կը ջանան ելնել պատճառէ ի պատճառ, վասն զի պատճառ մը արդիւնք մ'է մի այլ պատճառի, և սա մի ուրիշի, և արդիւնք մը պատճառ է մի այլ արդիւնքի, և սա

նոյնպէս իր կարգին, և այսպէս կան երեւութից այլ և այլ կարգերուն մէջ պատճառաց և արդեանց չգլխաներ, զորս տեսնել և ի յայտ բերել գործն է զանազան մասնաւոր գիտութեանց: Բայց յայտնի է որ մարդկային մտքին մի այլ հետաքրքրութիւնն ու պահանջն է գիտնալ թէ որո՞նք են առաջին պատճառները և կամ ո՞րն է բացարձակ պատճառը, թէ որո՞նք են տեսական ու գործնական բոլոր գիտութեանց առաջին սկզբունքները, անոնց վերջին երաշխիքը, առաջին ճշմարտութիւններն ու անոնց աղբիւրը: Այդ ծանօթութեանց մէջ կը հանդէլ մարդկային միտքը, որ, առանց բացարձակ ճշմարտութեանց յետադիման ունենալու, կը ստրակուսի իր ամենէն հաստատուն գիտութեանց ալ վրայ, և չի կրնար որոշ կոնսն մը տեսնել մարդոց քայլերուն այս աշխարհի վրայ: Այս դերագոյն ծանօթութիւնք բնագանցութիւնը կը կազմեն, որ բուն փիլիսոփայութիւնը կամ առաջին փիլիսոփայութիւնն է, որ իրեն սկզբնակէտ ունի հոգեոյն գիտութիւնը, կամ Հոգեբանութիւնն ու Տրամաբանութիւնը, — քանի որ ամէն ծանօթութեան սկիզբն ու պայմանն են միտքն ու անոր օրէնքները —, և որ իր յղացած էութեան, զօրութեան, բանաւորութեան և բարւոյ բացարձակութեան զաղափարներուն մէջ կ'ընծայէ հիմունքն Աստուծոյ, Բնութեան և Մարդոյն գիտութեանց: Այդ զաղափարաց ծանօթութիւնը հիմնական է ուրիշն ու կարեւոր պէտք մը մարդկային մտքին ու իղճին համար. և ահա՛ առ այդ եղած է միշտ, նախ ընդհանուր գիտութեան հետ չփոթուած և յետոյ անկէ բաժնուած ու մասնաւոր գիտութեանց վերեւ բարձրացած իրեն գիտութեանց գիտութիւն, փիլիսոփայութիւն մը, արդիւնաբար ու վախճանական բացարձակ պատճառներու ծանօթութեան հետամտութիւն մը, ճիգ մը մարդկային մասածման, որ դարերու մէջէ յառաջ բերած է խառնասիրական այլևայլ դպրոցներն ու տեսութիւնները, որք նաև, իրեն առաջնորդող տիրական սկզբունքներ, իրենց գործնական աղբեցութիւններն ու արդիւնքն ունեցած են մարդկային բանաւոր և ընկերային գործունէութեան բոլոր կարգերուն մէջ: Պէտք է ըսել միանգամայն թէ բնագանցական ծանօթութեանց մարդկային մտքին մէջ գոյացուցած համոզման նկարագիրը տարբեր է մաթեմատիքական և բնական գիտութեանց ստուգութեան հանգամանքէն: Բնագանցական կամ փիլիսոփայական ծանօթութիւնը գիտական ծանօթութիւնը չէ. ենթակայական է, և ոչ աւարկայական, և զգայարմաց զննութեան ու փորձերուն երաշխիքը չունի, թէև մտքին անդիմադրելի պահանջուններուն կը պատասխանէ, որով Տէքարդի ամէն ճշմարտութեանց համար պահանջած բացալայտութեան ստուգանիչը կրնայ ունենալ, այնպէս որ բնագանցական զաղափարի մը — Աստուծոյ գոյութեան — համար կրցած է ըսել Տէքարդ թէ «Աւելի ստոյգ է քան ամենէն ստոյգը երկրաշախութեան բոլոր տեսութիւններուն»: Բայց ի հարկէ

անհունին ու բայարձակին վերաբերեալ ծանօթութիւններ չէին կրնաք միջոցի ու ժամանակի մէջ սահմանափակ փորձի ու զննութեան լոկ արդիւնք ըլլալ. բանականութեան և սրտի բնազդութեան ու զէմյան զիման տեսութեանց, մեր մէջ եղած անհունին թելադրութիւններ ու լուսաւորութիւններ են, ո՛չ ընտւ ընդդէմ մտքի օրէնքներուն, զորս ընդհակառակն գոհացնել անհրաժեշտ պայմանն է անոնց, և միանգամայն սչին՝ մերժելու պարտաւոր փորձին ու գիտութեան արդիւնքներէն: Բայց յաւէտ հաւատք մը կրնանք կոչել փիլիսոփայական ծանօթութիւնը մեր մէջ քան գիտութիւն, որուն վերջին փաստն ու երաշխիքն է սակայն:

ՈՒ Յ. ՊԵՐՊԵՐԵՍՆ

Մ Ա Յ Ր Ը

Գծբարդ սրդայ, աչերքն ընդ մի՛ս փակած եր
Մայրն, երբ լուսոյն ինքը զանոնք բացած եր:
Նբահասակ ամենասմանչ բուխ կին մ'եր,
Ոյր բերան լուռ կենաց խորհուրդն յար ծամեր:
Ողիական գորովն որքին լեռնէ՛ լեռ
Փնտել տուաւ կին մ'որ իւր մօր նրմաներ:
Անա՛. . . կին մը վրե՛ից խորէն վեր նայեր.
Նեղուեցա՛ւ գիրկն. նո՛յն ինքն մայրն եր, ո՛հ, Մանն եր:

ՆԱԴԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵՍՆ

ՍԱՐՍՈՌԻՆ ՍԻՐՏ

Խոր քախիծով լեցուած է բոլոր անտուն գիշերանց,
Ուր նոնիներն լուսնած կ'ընկնէ հաւիւն մրութեան
Յնորական ու ցոյնի դաւանկութեամբ անբախանց
Կը պատմեն հե՛ք անցորդին գաղտնիքն իրենց գոյութեան:

Նոնիները մութին մէջ գիշերը ի՛նչ կը խոկան,
Երբ պարիկի պէս զուարթուն կ'անցնի հովը երգելէն
Հո՛ն, ծառացած Սուգին դէմ՝ իր պարերգը խօլական.
Ինչո՞ւ այդպէս կը դողան նոնիները համօրէն:

Սիրս ալ Սուգին ծառացած նոնին է այն խօլագիծ
Անյազօրէն սիրամար մութ կապոյտին հեռակայ
Գիշերին մէջ բարձրացած, հպարտութեամբն իրեն ցից
Ուր նմայո՛ս, անխորհուրդ իր երգերէն կը դողայ . . . :

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵՍՆ

ԴՐԱՄԸ ԻՆՉ ԿՐՆԵՆ

Բ.

Այն խանին մէջ, ուր Բարսեղ աղա իր սրջը հաստատած էր, և անոր մշանջկենական բնակիչը եղած, — ինչպէս գիշերտունիչ չղջիկներ ամայի ու աւերակ պատերու խուլ ամայութիւններուն մէջ, — իր յարկը, դէպի խանին վերի դուռը առաջացաւ երկայն քարայտաակ նորանցքին վրայ, քանի մը դուռ անդին, կը գիշերէր գաւառացի ուսանող մը, որ ծննդավայրէն բաժնուած, հոն թողած իր ծնողքը, ծանօթները, ազգականները, եկած էր բժշկութեան հետեւելու, մինակը, անտէր, իր ասպաղայի պատրաստութեան լուծումը այդ տապաքէզին մէջ փնտռելով, առաջնորդուած իր բնածին ընդունակութիւններէն: Տքնաջան աշխատութիւններէ ետքը յաջողելով ընդգրկել ընտրած տապաքէզին հետեւիլ կարենալու բաղլը, հիմա բոլոր ուժովը դատելորուած էր, դա՛ն լաւագոյն յաջողութիւնով գլուխ հանելու արշաւին մէջ, այն քաջարի չարքաշութիւնով, յամառ դիմադրութիւնով ու տոկոնն ոգորուններով, որոնք գաւառացի ուսանողին նկարագրի յատկանշական օժիւններն են: Իր նիւթական կացութիւնը անձուկ ու անբաւական միջոցներու տալուէնի մը վրայ դրուած էր, և կարենալու համար առանց արտաքին միջամտութեան տարիլ, պէտք ունէր ծայրայեղ խնայողութիւններու և խոշոր գրկանքներու, ծայրը-ծայրին, համեառ, հաշուադէտ կեանք մը սպրելով: Ծննդավայրէն իրեն կապուած չնայն ամաթոշակի եկամուտ մը միայն ունէր ամիսէ-ամիս, և ա՛յլ էր բոլորը, պէտք էր անով բաւականանալ, ի՛նչ կերպով որ ըլլար, ի՛նչ գրկանքներ ալ որ հարկադրէր ան իրեն: Իր դպրոցական պէտքերէն ետքը, ինչի՞ մէջ կրնար կեդրոնացնել չքաւոր ուսանողը իր ծախսերու սահմանափակումը, բայց եթէ ուսեատին, հազուադէպ-կապուտաին և բնուկութեան վարձքին: Ատոր համար է որ, զիջած էր իր գիշերները խանի մը անկիւնը անցընել, արդէն պանդուխտ իր կեանքը նո՛ր տեսակ պանդխտութեան մը մէջ ալ մտցնելով, և յօժարելով ճաշակել անոր գաւառութիւնը, զոր իր գպրոցականի դիրքը ու վարքը ա՛լ աւելի կը շեշտէին: Ու միշտ մղուած խնայելու իր մեծ պէտքէն, կիտելու համար սենեակի վարձքը, փնտռած էր տեղ մը, ուր կարենար շատ չնայն գումարով մը բնակիլ, և՛ գաած էր սենեկատէր մը, որ գիշերները իրեն կը արամադրէր գործատեղին, փոխարէն ստանալով ուսանողին վախժարձքը: Ատիկա, չհաղէտ սենեկատիրոջ համար ալ, թէ՛ վարձքի թեթեւացում մըն էր, և թէ՛ ապահովութիւն մը՝ գիշերները պահապան մը ձգած ըլլալու իր գոյքերուն գլուխը: Հոն կը սրտկէր կ'ել-

չէր ուսանողը, իրիկունը ուչ ատեն ճաշը ընելով մօտակայ ամաննոց խոհարարէ մը, որուն կերակուրները թէպէտ չէին գլուհեր իր քիմքը, սակայն անիկա գաւառացիական տոկուն համակերպութիւնով մը կեանքի ամէն գծնդակ պայմաններու, կը համբերէր զինքը դառնացնող խուժուժութիւններուն, միւրթարուելով ապագայի իր յուսադրութիւններէն և՛ աչքին առջեւը ունենալով այն սխիւարար մտածումը թէ՛ անշուշտ օր մը չէ օր մը՝ վերջը պիտի դար ոյդ տառապանքներուն և յուսահատեցուցիչ տուայտանքներուն։ Չէ՞ որ ատոր կ'ազդուէին արդէն իր բոլոր ջանքերը։ Իր անձնապիտանները, հաճոյքէ, վայելքէ ու պերճանքներէ իր հրաժարումը զինքը դաժնօրէն կ'ընկճէին, թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ բարոյապէս, բայց անիկա սեւեռած իր գաղափարականին, յատկապէս ու արեւցած անկէ, դիմադրաւելով ամէն գաւառութիւն և ոգորելով ամէն խոչընդոտի գէմ, կը խոյանար դէպի իր լուսաւէտ մտապատկերը, որուն սեւքէն գինովցած էր, և որուն տիրանալու իր ցանկութիւնը ոչինչ կրնար կտակցել։ Օժտուած իմացական բացառիկ կարողութիւնով մը՝ որ գաւառացիական ժառանգութենէ մը կ'երկարէր իր վրայ, յաջող էր բոլոր դասերուն մէջ, և իր ուսուցիչները դօրաւոր հաւատք մը գոյացուցած էին՝ իր մէջ տեսնելու ապագայ գիտուն մը, որ իրական ապրանքի մը փթիթուսն էր։ Կը բացուէր, կը ծաղկէր և վառաւոր վազորդայնի մը կը դիմէր։ Կորովի ու անխնայ աշխատող, ինչպէս են գաւառական խմբով շաղուած բոլոր պատանիները, լուրջ նուիրումով խելքը դասերուն ու գիրքերուն էր առած երիտասարդ ուսանողը, որնցմէ չէր բաժնէր գլուխը, և գպրոցէ դարձին, երբ գեռ իրիկունը ըլլալու համար բաւական տատեն մնացած կ'ըլլար, առանձնանալով խոր մէկ անկիւնը իր սենեակին, վաղապէս մը անշատուած ընկերոջը բաժինէն, խեղճուկ դրասեղանի մը առջեւը գլուխը հակած գիրքերուն վրայ, կ'աշխատէր, մինչեւ որ մութը իջնար ու ա'լ աչքերը չտեսնէին։ Գիւտութեան պաշտամունքին յատկացուած պզտիկ բազմին մը վերածած էր սենեակին իր աչք խորչը, իր նիւթական պզտիկ միջոցներովը դարգարելով զայն գիտական առարկաներով, պատկերներով, բժշկական նկարներով, և ապալ մտոր երեւոյթը ճշմարիտ տաճարի մը, ուր օրուան մէջ քանի՛ քանի՛ անգամներ կ'երթար իր հոգիին մտերիմ աղօթերգութիւնները փախալ և իր տենչանքներուն համար ջերմեամեղ խնկարկութիւններ ընել։ Իրիկունն, երբ ուչ ատեն միկնէր սենեակից ընկերը, ինք ալ գոցելով երկաթ դուռը, և խոշոր աղմուկով շաշկցնելով բանալին, կ'երթար ճաշելու, վերադարձին, իր թափուր ճգնաբանին լաակեաց առանձնութեանը մէջ, վախճ լամբարի մը ազօտ ու բեկեղեկ լոյսին առջեւը, նուիրուելու համար նորէն իր աշխատութիւններուն։

Ատենէ մը ի վեր ուսանողին կեանքին մէջ յայտնի փոփոխութիւն մը մտած էր, և զինքը ճանչցողներ չէին կրնար անուշադիր անցնիլ, զիտեղով անոր անտուր վիճակը: Շուարուն, խելւած, վարանտա, անատոյդ ու թարթափուն բան մը ունէր ան իր շարժումներուն մէջ, զոր կարելի էր երբեք հաշտեցնել իր նախկին ծանրաբարոյ, խոհական ու լուրջ աղու երեսցիթին հետ: Տարտամ, մտածկոտ, անկենդան շեշտ մը սպրդած էր հիմա իր խօսակցութեանը մէջ, և միւսքը կը մասնէր զգալի նշանը ցրուած, ցնորական, ըթայած վիճակի մը: Հալածուիլ կը թուէր ան չարաչուք խորհուրդէ մը, որ տիրած ըլլար իր խոնցա-կանութեանը, և զայն ցնորեցուցած աղետալի չարչարանքի մը տակ: Ի՞նչ էր պատահած: Դրայի ծանօթներ շուտով թափանցեցին գաղտնիքին և տեղեկացան թէ՛ Սեղբաւի առանց զրամի մնացած էր, և այդ մտահաղութեան տառապանքն էր որ կը չարչարէր զինքը: Բայց ո՛չ մէկը մտածեց անոր դարմանին փութալ: Ծայրայեղ ամօթխածութիւն մը և գաղանթիքը ուրիշի չբանտլու զուշառայութիւն մը՝ կ'արգիլէին զինքը ո՛ր և է մէկուն մօտենալու, օգնութեան մը յոյսով: Ծննդավայրէն լուր եկած էր թէ հունձքերը ազէկ գացած չըլլալով, ժամանակի մը համար բան մը չափաի կրնան ընել, և պիտի կորնն իրենց թոշակը: Ինք արդէն հաղիւ ծայրը-ծայրին կ'ապրէր, անտուր զրկանքներով: Ի՞նչ պիտի ընէր հիմա, երբ ամիսներով օգնութիւն մը չըլլար իրեն: Ապրուստը և պէտքերը չէին կենար: Անաչուք ու անաստա էին անոնք: Երկար մտածեց, խորհրդածեց, ճար մը փնտռեց իր կացութեան, բայց չգտաւ: Ծանօթներ, մտերիմներ, ազգականներ կը պակսէին իրեն: Ունեցած ըլլալու պարտաւային՝ ու չափաի կրնար համարձակիլ վիզը ծուկ անմեց քով և գաղանթիքը բանալ: Քիչ մը ստան, շուարուն, ճակուտադիրին յանձնուած, պատէ-պատ գաղնուելով, խոխալով, տառապե-լով, իր ցաւը իր մէջ խեղդելով գնաց, միշտ հալածուելով վաղուանին: Եղբաւ ու ջլտախ հեռազատիւրէն: Շատ գիշերներ ու ցրեկներ՝ մուս-ցաւ ճաշը, սնօթի մնաց, մէկ ժումով բաւականացաւ, յապաւելով ցրեկուանը կտօմ գիշերներ: Զլտախ նիհարութիւն մը՝ նետուած իր վրայ՝ կը կրծէր զինքը ու կը սպառէր: Անդամադրելի ուժարեկութիւն մը կը զգար, ու սրունքները կը կթռայէին: Տարագայման թուլութիւն մը գրկած էր զինքը, և իր գնացքին կուտար տառապող, լքուն ու փրփրկող մեղկութիւն մը՝ որ գութի արժանի էր: Երբեմնի վառվառն իր աչքերը կ'ապիճնեւորան խորը փախած՝ աղօտ ու տարտամ նայուածք մը ունէին, և կը մտածէին ներքին իր մեծ խռովքը: Անդամադրելի էր կացութեանը ու պէտք էր վերջ մը սաղ անար: Երկար մտածեց տառք վրայ, խորհրդածեց, վարանեցաւ, և անանելով որ իր փրկու-թեան ճանձնան հո՛գ էր միայն, որոշեց գործադրել ծրարիլը, Բարսեղ ազգին զիմը և փոխաւութիւն մը ընել:

Ան դիչերը, երբ չորս դին ամայացաւ, ու մութը առաջացաւ, Սեզրակ քաջալերեց ինքզինքը բռնի խրախոյսով մը, և, գլխահակ, շուտուն, ուղղուեցաւ Բարսեղ աղաի դուռին առջևը: Չյանդդնեցաւ դարնել, տեսնելով ցած պատուհանը ծածկող վարագոյրին ետեւը շուրի մը միօրինակ աստառնումը, դէպի առաջ, դէպի ետ: Ատիկա նշան էր թէ ճաշի վրայ էր ան դեռ: Սպասեց, դեղերեցաւ նրբանցքին երկայնքը: Ատեն-ատեն, ցաւոտ քարայտառակին վրայ ցցուած, ձեռքը ծնօտին ու նայուածքը դեռին սեւեռած, յառած մնաց առաջարկին գաղափարէն խռովելով: Քիչ ետքը տեսաւ որ ճաշը աւարտեր էր Բարսեղ աղա. պէտք էր այդ վայրկեանը չփոխյնել. գործին սկսելէ ետքը կրնար կրքոտիլ ու տխրիչ չկախել: Չաշկաւ դուռը՝ ձեռքին կռնակովը: Չարմացիտու ճիշով մը վեր ցատկեց Բարսեղ աղա տեղէն, ու գուլպաներուն ծայրերը կոխելէն երկնալով դուռին, բացաւ, աչքերը սրելով դուռի մութին մէջ, ճանչնալու համար այդ անսովոր ու անժամանակ հիւրը: Ճանչցաւ Սեզրակը. կը տեսնուէին արդէն տոտն-ատեն: Պզտիկ հիւրամեծարութիւն մը բրաւ, խնդուն ժպիտ մը ձեւացնելով: Նստան, խօսեցան ներսէն-դուրսէն, և Բարսեղ աղա ուրախացաւ ուսանողին այցելութենէն, որ իր չզիտցած բաներուն վրայ « ապշեցուցիչ ու վարմանալի պատմութիւններ կ'ընէր: Բարսեղ աղա աչքերը խոշոր-խոշոր կը բանար, զարմացական բացաւ գանձութիւններ արձակելով երբեմն, իրեն անմանօթ անգեկութեան մը ցայտնումին վրայ, և կամովին խօսակցութեան կը զրգուէր Սեզրակը, որպէս զի այդ ժամաւաճառութենէն ալ նպատուորութիւն, և ուրիշ կերպով մը շահադործած ըլլայ պաշտպանեցուցած վայրկեանները: Սեզրակ չուղեց երկար զրաղեցնել վաշխառուն: Պահ մը նիւթը փոխելով, անցնելու համար իրենին, պզտիկ առաջարան մը չինեց, խօսեցաւ ծննդավայրի իր պաշտպաններուն, ուսանողական կեանքի դժուարութիւններուն վրայ, մասնաւորեց իրեն, պարզեց արդի կացութիւնը, դրամէ գրկուած ըլլալը, կարճութիւնը, և փոփոխանդիր զգուշաւորութիւնով զգացուց թէ՛ իր այցելութեան նպատակն էր պզտիկ փոխառութիւն մը խնդրել: Հասկցնելէ ետքը այս պարագան, ուսանողը բաց, սպասելով վաշխառուն պատասխանին: Բարսեղ աղաի տխրիքն աղէկ չհնչեց այս առաջարկը. գոհ չմնաց խօսակցութեան այս կէքէն: Ծամածուեց դէմքը, և փոխեց խօսակցութեան նախկին սիրալիր ու խնդուն շեշտը: Մատներուն մէջ սուս թաւ պեխերը և խորհրդածեց ինքնիրեն: Ինչպէս կ'ըլլար, դրամ փոխ տալ ուսանողի մը, որուն ճակատագիրը և վաղարգայնը սրբար մշուշի մը մէջ կը ծածանէր ու անստոյգ կուտանի մը կը յենուէր: Տա՞ր... չի տա՞ր...: Հապա եթէ դրամը կորսուէր ու մէջ խաղար: Ինչ պիտի ընէր ան տուն. որո՞՞ք պիտի պահանջէր, երբ տկամայ անանկութիւն հռչակէր

փոխառու աղան, և բացարձակ անհնարութեանը մէջ գտնուէր վճարելու: Չտփեց, ձեռեց, միաքէն մէջ պտտացուց այդ հաւանականութիւնները, և չկրնալով հաշտուիլ անստոյգ ճակատագրի մը յանձնուած իր ոսկիներուն ընելիք զոհողութեանը հետ, որոշեց միաքէն, մերժել առաջարկը, բացառական պատասխան տալ: Զերծ մնալու համար ասորայ տմէն անպատահելութիւններէ, մէկ անգամ պէտք պիտի ըլլար երեսը պինդցնել: Չէ՞ որ տատլ պիտի վտտակէր սիրտի մշտնջենական խաղաղութիւն և անհող պիտի մնար հաւանական ամէն փնտի ու զոհողութեան դէմ: Պէ՛տք էր ատանկ շարժիլ. իր ի՛նչ փոյթը թէ՛ օտար ուսանող մը, որ ս'է մէկ կտայ ունէր իրեն հետ, անօթի էր մնացեր ու կարօռ օգնական ձեռքերու, փրկուելու համար իր անել կացութենէն: Կարծրացուց սիրտը, արդէ՛ն տղնուական զգացումներու յուզումին ըթայած իր սիրտը, և վճռական պատասխան տուաւ թէ չէ՛ր կրնար ատանկ դուրս մը ընել, որովհետեւ, առարկեց, դորձերը գէշ էրէթային, շահ չիկար, թէ ատանկ բարեգործութիւններու երեսէն շատ փնտս տեսած էր ինք, թէ դրամական անձկութեան մէջ կը գտնուէր, թէ այդ օրերը հասուցանելիք մութնայներ ունէր...: Չհաւատաց ուսանողը անխիղճ վաշխառուին խօսքերուն: Չուզեց ալ սնդիլ իր առաջարկին վրայ, վստահ թէ՛ ալ ոչի՛նչ օգուտ պիտի ընէր անոր սիրտը սղոքելու և գութի զգացումները գրգռելու համար: Գլխի՛տր, յոստրեկ, հագիտլ զգեանուած, դարձաւ առանձնանալ սենեակը, ուրիշ հիմա կը մանէր իւր դժոխքէ մը ներս, և կը թուէր իրեն թէ անոր թանձրաղանդուած կամարները գլխուն կը վլէէին: Խեղքը կը պտուաքէր ու աչքերը կը մթաղնէին սեւաթախիժ ցնորքի մը մէջ, որ զինքը կը տանջէր, կը ցնցէր հողին ու հրեղէն կրակներու մէջ կ'այրէր մարմինը:

Բարսեղ աղա յաջորդ առտուն բա՛ն մը չէր յիշեր դրացի ուսանողին թախանձողին ու ծուռլիղ առաջարկէն, և իր մերժումը ս'ր և է կերպով չէր վրդովէր զինքը, տալով իրեն կսկծալի տյն խիղճի խայթը, որ կ'արթննայ զգացումի բարախումներովը թրթուռն հողիներու մէջ: Անտղտղ ու անզգած, ան նուիրուած էր նորէն գործերուն, նորածող շահատակութիւններու հալածանքին անձնատուր:

* * *

Չքաւոր ուսանողին անէ՞ծքը բռնեց, կամ կծծի գրոմատերին ըսած սուտերը իրաւի՞ դարձան, չգիտցուեցաւ, Բարսեղ աղան վրայ չարաշուք փոխութիւն մը եկաւ: Զղախոտ, խէթ, սրա՛նդ, անհամբայ բնաւորութիւն մը եկած էր հիմա վրան, և իր արտառոց վարմունքները յայտնապէս կը զգացնէին թէ ծանր տագնապի մը մէջ է ան, որ կը չարչարէ զինքը ու կը հալածէ զիշեր-ցորեկ: Դուրսը

գրեթէ չճաշող այդ համբաւութեամբ ժխտող, հիմա կերակուր պատրաստելու համբերութիւնը չէր ունենար և դուրսը կը ճաշէր: Եւ զինքն առն ոտք չդնող մարդը, հիմա կը տեսնուէր որ՝ շատ անգամ անկէ դուրս կուգար, զինով ու մտայնոր: Բա՛ն մը կար: Եւ դրացիներ՝ բերանը վնտուկով, շուտով թախանցեցին այդ գազանիքին: Մեծ վնաս մը տուած էր Բարսեղ ազա այդ օրերը, որուն ցաւը զինքը կը խնթեցնէր: Շատ չանցաւ, իր անունը բերնէ բերան տարածուեցաւ, աղետալի պարագայի մը զուգորդութեամբ: Առտու մը մեռած գտնուեցաւ սենեակէն, կաթուածահար, շանթուած ցաւէն այն վնասին, որ մահուանը պատճառ եղած էր, սիրտին իջեցնելով: Եկեցեցին իր պաշտօնեաները զրկեց: Եկան վերցնել իր մեռելը, և իր գազալը չունեցաւ սգակիր հետեւորդ մը: Ու իր հարստութիւնը ժառանգեց հեռուոր աղբական մը, որ մէկ շարժումով կը տիրանար հակայ գումարի մը, զիջուած աղքատին ու կարօտին անիրաւաբար շահագործուած լուծանքէն: Արդարութիւնը իր տեղը գտաւ, որովհետեւ այդ հարստութիւնը, որ հովի պէս դացած էր լեցուիլ դողը անոր քրտինքին անբաժին ծոյլի մը, հովի պէս հալեցաւ շուտայ միտումներու մէջ:

Ու Բարսեղ ազաի կեանքը, անցաւ աշխարհէն անշուք ու խորշակահար խոտի մը պէս, անհետ, անպտուղ, անպէտ, անխառն չտոկ, կենդանի խորհրդանշանի մը մէջ անմահացնելով օրինակը այն Հայ մեծահարուստ կիծիներուն՝ որոնք հարստութիւնը ու դրամը արժեցնելու մեծ գաղափարականին կուրցած, կը զլանա՛ն խո՛րապէս մարդկային բարեգործ վերկարար ու երախտարժան նման կարօտութիւններու, ամէնը իրենց հետ տանելու անդրդուելի մղեղմութենէ մը զերազրգուած: Գերեզմանէն անդին ալ պէտք ունէին դրամին...

ԵՆՈՎԻ ԱՐՄԷՆ

ԿՈՆՔՈՒՌՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻՆ

Կոնքուռներու Ակադեմիին, իր հինգ հազար ֆրանքի մրցանակը յատկացուց ժէլուս և ժան Թաւօ եղբայրներուն Dingley դորժին: Թաւօներուն երէցը երեսուներկու տարու է, կրտսերը քսանը ինը, աստղիկը իրաւագէտ, երկրորդը նախկին ուսանող վարժապետանոցին: Երկուքն ալ ծնած են Սէն-ժիւնիէն: Կանուխէն զրկուելով ծնողքէ, երկուքն ալ ստիպուած են ապրուստնին հայթայթել զրախան զբաղումներով, որուն կոչումը կը զգային: Աշխատակցած են շատ մը թերթերու:

Կոնքուռներու Ակադեմիէն ետքը, Գրադէսներու Ընկերութիւնն ալ իր աստղին մրցանակը յատկացուց Ժիւլ Պուաի:

ՖԵՐՏԻՆԱՆ ՊՐԻՒՆԹԻԷՌ

Ա.

Ահաւասիկ շատ դժբաղդ մարդ մը...

Արթնցող խղճին և դէպի լոյսը բացուող իմացականութեան առջև ոչինչ կրնայ տակալ իրր թումբ: Չկայ պատուար մը որ խղճին ու մտքին զարթնումը դիմադրուէ ու չխորտակուի: Հուժկու, ամենի՛ նոյնիսկ անկարեկիր է այդ զարթնումը, բայց միանգամայն դէպի բարին կը ձգտի, որովհետեւ ճշմարտութիւնը ունի իրեն հիմ: Բոլոր իմացական հոսանքներու զօրութեան գաղտնիքը ասոր մէջն է: Մարդկութիւնը մշտնջենի թափառիկ մըն է ի խնդիր գերազոյն ճշմարտութեան մը որ իր հողին լիկող անձանցին խաւարը պիտի լուսաւորէ, որ իր տիւտած լոյսին հետ պիտի բերէ նաեւ բարիքի այն բաժինը որ հիմն է բոլոր կրօնքներուն, բոլոր հաւատալիքներուն և փոխադասութեանց:

Իմացական հոսանքները անա այդ լոյսին ճամբան կը հարթեն: Անոնք իրենց պարունակած ճշմարտութեան՝ հետեւաբար նաեւ իրենց խոստացած բարիքին չափով միայն կը յանկուցանեն մարդկութիւնը, և անոր մէջ կ'արմատանան իրր պաշտելի հաւատալիքներ: Եւ երբ մարդկային էութեան երկու հղօրագոյն տարբերը՝ ինդճն ու Միտքը միեւնոյն ատեն կը համոզուին այդ ճշմարտութեան և անոր բարիքը կ'ակնկալեն, այն ատեն՝ իմացական հոսանքը ուր այդ ճշմարտութիւնն ու ակնկալութիւնները բունած են, կը դառնայ բոլորովին անդիմադրելի, կը սրտեկայ ու կը տարածուի այնքան հեշտիւ, որքան որ արծուի մը արքենի ճախրանքը կը կտրէ անջրպետին ալքերը: Այլևս ամէն հակադդեցութիւն կը փշրուի անոր առջև՝ ինչպէս խաւարին գուլանքը կը լուծուին ու կը չքանան հրաշալիաւ արշալոյսի մը չիկագէտ ճաճանչներէն խոցուելով:

Ֆէրտինան Պրիւնթիէս մարմնացեալ հակադդեցութիւն մը եղաւ այդ ատենակ հոսանքի մը դէմ: Նոյն խակ իր ճակատադրին, իր ճշմարտ կոչումին դէմ մաքառեցաւ: Ինք անմասն չէր մնացած այն գերազոյն շնորհէն՝ զոր Բնութիւնը ընտրեալ ճակատներու կը դրոշմէ՝ իրր պատկ իմացական արժանեաց: Հանճարեղ և իմաստուն մարդ մըն էր, խուճարկու՝ խորաթափանց և աշխատասէր: Շատ ազուր յատկութիւններ՝ հոյակապ ազարանձանի մը պէս՝ պճնած էին իր էսպէս հզօր միտքը զոր հաղուսդիւտ հմտութիւն մը աւելի կը զօրացնէր, և որ կրնար

զինքը դարձնել մէկը այն ամբակուռ սիւներէն որոնց վրայ կը կանգնէր ցեղերու իմացական մեծութեան չէնքը :

Այս պէտք էր ըլլար իր կատարելիք դերը՝ ժամանակակից Ֆրանսայի մտաւորական շարժման մէջ : Եւ գրեթէ ամէն դիւրութիւն ունէր ատոր համար : Յամառ, յանդուգն ու վիճաւէր էր, ու նոյն ատեն ալ մոգիչ պերճախօսութեամբ օժտուած ատենախօս մը որ գիտէր ազմուկ յարուցանել ու մեծաշուք արձագանգ մը տալ իր յուզած հարցերուն : — Թանկագին կարողութիւն մա՛նաւանդ քննադատի մը և ուսուցչի մը համար որ ամբօրը պիտի լուսաւորէր, որ թեւատ ու խարխալող սերունդը պիտի զօրացնէր, որ շողարձակ ջահ մը, անկեղծ ու անսպթաք ռահվիրայ մը պիտի դառնար մէկուն ու միւսին համար :

Եւ սակայն՝ հակառակ այս ամէնուն՝ Պրիւնթիէն ո՛չ միայն սին մը չէղաւ, այլ նոյն իսկ պատուանդան մըն ալ չկրցաւ դառնալ, որպէս զի գոնէ ուրիշ սիւներու բարձրացման գործը դիւրացնէր : Ֆրանսա՝ չա՛տ աւելի բարեբաղդ քննադատներ ունեցած է : Իրովիթ Թէն ահազին ազդեցութիւն գործեց որքա՛ն իր ժամանակին, այնքան նաեւ յաջորդ ժամանակներու վրայ, նոր հորիզոններ բացաւ գրականութեան և արուեստին արտայայտութեան ու ճանաչողութեան համար, դպրոցի մը հիմքը դրաւ և անթիւ աշակերտներ ունեցաւ . մինչդեռ Պրիւնթիէն, նոյնքան հմուտ ու օժտեալ ըլլալով հանդերձ, միշտակը մնաց զաղափարներու այն ուղիւնովն մէջ որուն ամէնէն խլրտիչ տարրերէն մէկն էր, զոր կ'ուռնայնէր ու կը փոթորկէր անընդհատ, ամենի՛ր ոյժով մը, անսասան ու որոտագին : Իր գործը՝ իբր անհատական ջանքի արդիւնք, իբր իմացական կորովի՝ արտայայտութիւն՝ չառ մեծ է, ճշմարիտ արտանի աշխատութիւն մը՝ զմայլելի ու պատկառազդու : Բայց նոյն ատեն, — գոնէ իր ընդհանուր ձգտումներուն մէջ, — այդ գործը անպէտ ու ամուլ է, որովհետեւ՝ կատաղի հակազդեցութիւն մըն է ժամանակին ոգւոյն, իմացական յառաջդիմութեան, դէպի լոյս՝ դէպի ճշմարտութիւն ու բարիք զխնդ ամէն ջանքերու գէմ : Քանզի՛ն՝ աւերիչ տարր մը որ խորշակի մը պէս փչեց շարունակ բոլոր նոր մտածութեանց, ինչպէս նաեւ բոլոր այն մտածութեանց վրայ՝ որոնք իր համոզմանց հետ անհաշտ էին, որոնք իր ըմբռնումներուն հակոսմեաց ընթացք մը կը բռնէին :

Իմացական աշխարհին՝ ինչպէս բնական կարգերու մէջ՝ չրջափոխութիւնները միշտ համակրելի են, որովհետեւ իրենց առթած նուազագոյն վնասին փոխարէն անսահման բարիքի ծնունդ կուտան : Չմեռուան սառնամանիքը որ ճաղած և իր կենսական հիւթերը սպառած բուսականութիւնը կը խեղդէ ու կը թմբեցնէ, բարերար փոխանցման միջոցն է, յուսթի ու կենարար երկունքի չրջան մը՝ որ գարնայնի բուսականութեան վերածնունդը կը սկստորաստէ : Այսպէս է նաեւ իմա-

ցական աշխարհին մէջ։ Մտածութեան նոր հոսանքները որոնք ամա-
ցած և այլևս ապարդիւն ուրիշ հոսանքներու կործանմամբ կը
կանգնին, միշտ նուազագոյն վնասով մեծագոյն բարիքը իրականացու-
ցած կ'ըլլան, — անշուշտ իրենց հետապնդած ճշմարտութեան համեմա-
տութեամբ։ Գարնան վերննձիւղումը, գարնան փթիւումը գիւրացնող
ստոնամանիքն են անոնք։ Բայց խորշակը ուրիշ բան է, կ'այլ է ու
կը չորցնէ անդարձ կերպով, կը խոցէ մինչև հողին, և իր սպանիչ
ժահը կը թափանցէ մինչև ամենախոր արմատները։ Ինչ չափով որ
ստոնամանիքը սիրելի գարձած է, նոյն չափով ալ ատելի է խորշակը։
Եւ Պրիւնթիէո ամէնէն գարնուրդին էր խորշակներուն։ Անա թէ
ինչո՞ւ այնքան բարձր իմացականութիւն մը, այնքան հուժկու և
սրտակաւելի խորհող մը, այնքան խանդավառ, յանդուգն ու անվեհեր
պայքարող մը ըլլալով հանդերձ միայն ատելութիւն գտաւ իր չաւրժ։

Շատ դասեր կան քաղելիք այս դժբաղդ մարդուն կեանքէն։ Իր
բացած պայքարները ապերախտ և ապարդիւն մաքառումներ եղան,
ուրիշ ոչինչ։ Ժամանակը մերժեց զանոնք, և իմացական հոսանքը որ
այդ ժամանակին ուղեոյն անուշով կազմուած էր, զինքն ալ խառնեց
բոլոր այն հակադրիչ տարրերուն որոնք իր ընթացքը խափանել կ'ուզէին
և քչեց տարաւ իրեն հետ։ Պրիւնթիէո՝ իրը մտածող իլեակ մը մտա-
նուեցաւ այդ հոսանքին, որ դէպի յաղթութիւն կը քալէր, հետեւա-
բար՝ իր անկումը պիտի վճռէր։ Իր աչքը միշտ այն մեկնակէտին
վրայ մնաց՝ ուրիշ անկումը սկսած էր, չուղեց զիջում ընել, չարու-
նակեց մաքառել հոսանքին փրփրերախ ու այլևս անդիմադրելի ժայթ-
քումներուն դէմ, արհամարհեց ամուսնիքները որոնց կառչելով թերեւս
կարենար ամուր կռուան մը գանել ու վերագարձ մը փորձել դէպի
այն բարձունքը ուրիշ մեկնած էր, և անկէ անդին ալ՝ դէպի վտառ-
ւորում, դէպի ատուածացում։ Ու մինչդեռ ինք գազաթը կ'երազէր,
հոսանքը կը շարունակէր զինքը քչել միշտ աւելի վար, միշտ աւելի
խորը, տեսակ մը անազորոյն մոլեգնութեամբ զոր խլեակին դիմադրու-
թիւնը բոլորովին կը հրդեհէր։ Այսպէսով՝ Պրիւնթիէո հետզհետէ աւելի
հեռացաւ իր երազած դադարէն, որուն անհշտնքը զինքը կ'ուտէր, և
որ վերջ ի վերջոյ բոլորովին աներեւոյթ եղաւ աչուքներուն տուժեւէն։
Հոսանքը ողջունած էր հանդրուան մը ուր յաղթութեան կամար մը կը
դանէր, և որուն առջև Պրիւնթիէո անկումը կը լրանար։

Այս է արդէն բոլոր ամբարտաւան դէժի մարդոյ վախճանը։ Որով-
հետեւ այս հզօր խորհողը իր իմաստութեան չափով ալ ամբարտաւանու-
թիւն ունէր, և այս վերջին ունակութեան զրգիւնները չա՞տ աւելի
տիրական ու զօրաւոր էին իր քով՝ քան միւս յատկութեան ձգտում-
ները։ Յամուսի կարծիքի մը վրայ՝ յաճախ առանց խել անոր մասին
հիմնական համոզում մը գոյացնելու, զգալ թէ այդ կարծիքը սխալ

է ու կրկին անխափստ պահել զայն գայթակղեցուցիչ կամակորութեամբ մը, ահա մեծագոյն թերութիւնը որ այս թանկագին մտքին անկումը վճռեց, և դժբաղդութեան, վշտի ու հիասթափման փշապսակ մը բոլորեց իր գլխուն շուրջը, որ սակայն այնքան արժանի էր հիացման ու փառարանութեան մրմունջներով խնկուած դափնիներու: Անիկա մատի ծայրով խաղաց բարձրագոյն իմաստութեանց հետ, գասական ամէնէն տարամբժ գործերու լարիւրինթոսները լուսաւորեց, պարզեց ու մեկնեց, ու միեւնոյն տառն չկրցաւ թափանցել շատ տարբարկան իմաստութեանց, մոլորեցաւ նոյն իսկ ամենահեշտին արահետներու մէջ, չըմբռնեց ու չյարգեց ճշմարտութիւններ այնքան պարզ, այնքան ինքնամատուց՝ որ տղայական պիտի թուէին նոյն իսկ ամէնէն արհաւիրելի միջակութեանց:

Իր կամահաճ մարդու յանձնապատասխանութիւնը այնքան մեծ եղաւ, որ իր-ատենին ամէնէն լուսաւորուած, ամէնէն զարդուն մտքերէն մէկը ըլլալով հանդերձ՝ ամէնէն կոյրերէն մէկը դարձաւ, չկրցաւ ո՛չ ժամանակը ըմբռնել, ո՛չ միջավայրին իմացական պայմաններուն շրջափոխութիւնը, ո՛չ ալ հոգին այն սերունդին՝ որուն առաջնորդող ջոհերէն մէկը ըլլալու յաւակնութեամբ կը փրտնար: Ո՛չ միայն մատ մը ազդեց անգամ չկրցաւ նախատեսել, այլ նոյն իսկ ներկան՝ զոր իր կամքին տակ փշրելու և իր սիրած կաղապարին մէջ թափելու հաւմար այնքան ճիշդ թափեց, խուսափեցաւ իր արտակարգ խորատեսութենէն: Ահա այնքան անողոք է ամբարտաւանութեան երկունքը:

Մենք այս մտքին տակելի գրական համոզում մը պիտի գոյայնենք, եթէ երբեք քննենք այն իմացական հոսանքը՝ որ Պրիւնթիէսի և իր համախոհներուն անկումը վճռեց, ինչպէս նաև այն հակազդեցութիւնը՝ որով այս վերջինները անոր դէմ մաքառեցան:

ԱՐԱՍ ԱՆՏՈՆԵԱՆ

Մամուլի պարսկամոտքին մը կասարած ըլլալ կը նկատեմ՝ հրատարակել հետեւեալը, սրբագրութեամբ համար խեղափառուած մէկ գրուածքին գրագէտի մը՝ որուն պէտք է յարգել նկզինակաւորութիւնը. —

1907ի Նշան-Պապիկեան Տարեցոյցին մէջ տպագած են սա սխալները. — «Տարեցոյց»ին երկրորդ մասին 6րդ էջին Յ. Գ. Մըմբեանի անունով «Տարօքինակ Խոկումներ» վերնագիրը՝ պէտք է ըլլայ «Տարեկան Խոկումներ»։ Նոյն էջ՝ 3րդ տող «միշտ է» պէտք է ըլլայ «միշտէ»։ 6րդ տող «անհատ»ը՝ «անհատ»։ 11րդ տող «այն նաև»ը՝ «նոյն նաև»։ Նոյն տող «պահակիր»ը՝ «պահակեր»։ 8րդ էջ՝ տող 1 «չուտով»ը՝ «չատով»։

Ե. Դ. ՄԲՄԵԼԵԱՆ

ԻՆՏՐԱՅԻ ՆԵՐԱՇԻԱՐՀԸ

Բ.

Ոճի, ինչ որ ըսել է իմաստի, այս բաղմամամնութիւնը՝ շատերուն առիթ տուաւ խրթնութեան վրայ խօսելու. անշուշտ բաղմաման պարբերութեամբ մը արտայայտուած գաղափարները կարելի է կոտորակել և. զանազան անձառ հասուածներու բաժնով, բայց այդ բանը շատ իսկ պիտի մնասէր գաղափարի միութեան, այն շունչին որ կը լեցնէ մանուածապատ պարբերութիւն մը, Ներաշխարհի գերազանցապէս համադրական ոգիին:

Եւ ի՞նչպէս համադրական ոճ շունենար ան որուն համար ամբողջ աիեղերքը համադրութիւն մըն է, որուն համար աշխարհի բոլոր իրերն ու երևոյթները մեծ ամբողջին, հանրէութեան մասերն ու արտայայտութիւններն են, որուն համար բոլոր զօրութիւնները միեւնոյն ոյժն են, համատարած, ամենաթափանց կիկերին թրթուումը: Ամէն ինչ կը վերածուի թրթուումին ու շարժման, այսինքն սա բառին. Ջգտում (tend.): Հանճարը, ելեկարհասանքը, հաւասարը, կամքը, սէրը, ծանրութիւնը (gravita.), բարոյականը, աղօթքը, միեւնոյն ձգտումին առումները, պարագայացումներն են: «Մարմինները հիւլէկոյտեր են որք ուրիշ բան չեն այլ կիկերի հոծոյթներ, կիկերի եզրափոխական, ձեւափոխական, վիճափներ: Նիւթ ըսուածը խտացած, սահմանաւորուած Արփն է. Հողին է. և հողին՝ սահմանադիւրծ, անպարզելի Նիւթը. Նիւթին նախաձեւութիւնն ու վերջնափոխութիւնն է: Այս երկու անհուն ձեւերն արարածներուն մէջ ժամանակակից են անհունազան հափերով. բոլոր էակներն այս երկու ձեւերը միանգամայն կը կրեն: Երանի՛ անոնց որ կարող են զեղման, անեռականութեան, և կրնան թոյլ տալ Արփին՝ յորդակոհակ թափանցելու գիրենք. որոց մէջ հիւլէկոյտերն անօտր են, որոց հիւլէգրութիւնները լայնածիր են և ամբողջին թրթուացումը մեծ է, — վստահի հիւլէներուն դարձդարձումը՝ թրթուացումն է մարմնոց մը բովանդակին, ինչպէս լուսաւորներուն ծաւալումը Տիեզերքին ամենի թրթուացումն է: Լուսաւորները Տիեզերքին հիւլէներն են»:

Հոծութիւնը, բաղմամամնութիւնը, համադրութիւնը ուրեմն, որոնք կը տեսնուին Ինտրային մէջ՝ կերպարանական, երեւութական, արտաքին բաներ չեն, այլ էական, հիմնական նկարագիրն են անոր և իրենց արմատներն ունին անոր իմաստափրական, բնազանցական դաւանանքին մէջ, որ երանի կը կարդայ Տիեզերքէն, Արփէն թափանցողին, հանրէացողին: «Կեանքը, աննպաստութիւնը կ'աճի էութեանս մէջ, լուսաւորու. անշղթալիւ, անհատկապէս անշունք մ'է ամբողջ իմացական

նախնայ։ Ի՞նչ պիտի ընեմ ես բոլոր այս ձգտումները որ կը ծագին, կը յառին, գեղեցիկ ու յուսահատական, արտում անջրպետի մը մէջ։ Կարծես համադրապէս բանի մը կը հաւտամ։ Ի՞նչ բանի, ո՞վ գիտէ։ Միթէ կարելի՞ է գիտնալ ինչ բանի որ կը տենչայ ամբողջ միտքը միանգամայն։ Տարտամօրէն ընդհամարուող, բայց հոգեւին սիրելի, անպատում բան մ'է ան որու կը ձգտիմ։ Միթէ Իսինյան չէ՞ . . . : Միթէ ես իսկ չեմ անիկա . . . : Եւ կամ միթէ անհունը չէ՞ այն անպատում ու նշուղ համադրոյթը որուն կը տարուիմ էովին։ . . . Եւ մարդ՝ համադրելու, համադրուելու երազով լեցուն, կը բաղձայ ա՛յն գերընդհանուր ու յաւերժական էութեան որ արտաշխարհի այցակերպութեանց մէջ անսխալօրէն անոնց նոյնութիւնն է, օրէնքն է»։ Ասիկէ աւելին ալ կ'ընդգրկէ գեռ Խնորայի հանրէութիւնը զոր ներկան չկրնար իր ամբառութեամբը պարագրել. «Եւ զո՞ր (լոյսը) ներանձնական եսս կը տենչայ էութեանս խորքէն, անդրեասական հանրէութեանս դարերէն ի վեր»։ Այս աստիճան համադրական միտք մը ի՞նչպէս կրնար փրշրուիլ վերլուծական անջատականութեան մէջ։

Դարձեալ այս հանրէադաշտութիւնն է որ պատճառ է հեղինակին՝ ամէն նէն իրական իրերն ու երեւոյթները բացատրելու ամէնէն սիրական եղանակին՝ վերացման որ նուազ մեղադրելի չնկատուեցաւ։ Չեմ գիտեր թէ քերթուած մը ինչ եղանակ ունի ըլլալու, եթէ ոչ վերացումը։ Ոչ մէկ իր կամ երեւոյթ բանաստեղծական է առանց այն վերացման կամ այն խորհուրդին ուր զայն կը բարձրացնէ բանաստեղծը։ Ծառը, արեւը, լուսինը, լեռը, կիներ, հովը ի՞նչ ունին բանաստեղծական եթէ ոչ այն զգացումներու ու գաղափարներու հայրը զոր ամենց կը զուգորդենք։ Թռչունը ծառին մէջ պատաղարան մը, կատուն արեւին մէջ իր բնակութեան վայելքը կը փնտռէ. չունը լուսնին դէմ կը հաճէ. այծը լեռը կ'որածի. շատերուն համար կիներ շրջապահու մըն է միայն կամ ծախքերու գուռ. բանաստեղծն է միայն որ ամենց մէջ իր վերացումներուն չարժանիքը կը գտնէ։ Ո՛րքան արդար է մեր լեզուին մէջ «վերացում» բառին «բարձրացում» նշանակութիւնը։ Վերացումը սակայն իսկապէս ընդհանրացում մըն է։ Նիշա այդ ընդհանրացումով վերացումն է սակայն որ հետաւոր գաղափարները իրարու կը մերձեցնէ «Ներաշխարհ»ին մէջ, հետաւոր անարոշութեանց մէջ։ Անարոշութիւններ, ահա այն բանը որմէ պարուրուիլ այնքան կը սիրէ Խնորա։ Իրեն ա՛յնքան սիրելի է պէտու իրիկնամետի տարտամութեան, հորիզոնին անուրջութեան, որքան թարթիլով իմաստասիրական հարցանիչերու, կամ ծրագրուող, ուրուագծուող գաղափարներու մշուշին մէջ։ Այդ է նաեւ իր հակումը նկարչութեան մէջ ուր կը տեսնէինք թէ կը նախընտրէր ամէնէն բարդ, ամէնէն անտնտն գոյները, որոնք սակայն չէին ամէնէն նուազ գիւթիչները. իր գոյները աւելի կը գուշակուին քան թէ կը տեսնուին, կը զանազանուին։

«Ոճը մարդն իսկ է»ն լաւագոյն չափով յարմարէր այլուր քան հոս : «Ներաշխարհ»ը Խնորայի կեանքին այն շրջանին կը համապատասխանէ, ուր ան՝ համակ երազ, համակ ինքնամիտութիւն, համակ հոգի էր, աշխարհէ քաշուած, իր նոճիներով վանդակուած սննեակին մէջ, մաքնակաւ անվնասութեան, աղքատութեան, բանդին, երկնոսի բրածոյի մը, բուրգերուն և իր հօր պատկերին, իր եսին, պատուհանէն դուրսի մութին մէջ ուրուադժուող եսին հետ : Նոճիներուն զոր երգեց, մարմնին հետ զոր անտեսեց, թշուառութեան հետ որմէ ցաւով բաժնուեցաւ, և ամուսնութեան նախընթաց օրը իր աղքատութեան վկայ սննեակին ձերմակ պատերէն մէկուն անկիւնը, մատրտով մը դադաւազողի գրեց թախծութեամբ. «Մնաս բարով, թշուառութիւն» . վանդի ան էր իր մուսան, և օր մը ու օրեր, երբ այն պատկերապարզ թերթին անօրէնը որուն կ'աշխատակցէր Խնորա՝ կը յայտնէր թէ յաջորդ թիւին համար նոր պատկեր չունէր յանձնարարելու, մին այն պատկերներէն զոր այնքան գովամակութեամբ և տոխաղապար աշխատելով կ'նստապայքարին դէմ ընդվզելով կը գծէր, մեծ հրճուանքով կ'ընէր զինքը բռնի աշխատութեան մը նողկանքէն ազատող և սակայն միանգամայն գրամէն գրկող խմբագրին. «էհ, նէ ետբայմ, պէն տէ կիտլալ poésie ետգարմ» . ահա բոլոր իր հաճոյքը, վայելքը, երանութիւնը :

Կը տեսնէինք զինքը քաղաքէն դուրս, մուրուն քայլերով, իր առաջը երթալով, իր խոկումներուն հետ առանձին : Հաղիւ կ'երեւար ընկերութեան մէջ, որ քիչ հոգիներէ և իրեն պէս աղքատներէ միայն կը բաղկանար. և հոն իսկ, այսինքն ուսեալ, աղքատ և աղմկալից հասակակիցներու մէջ արտասովոր չէր իրեն՝ բաղմոյցին վրայ ետ իյնալ, գլուխը կուրծքին վրայ հանդչած, կիսաբաց աչքերը անթարթ և անտեսող, մնալ ժամանակ մը, խուլ իր շուրջ եղած խօսակցութեանց կամ վիճաբանութեանց ու աղմուկին : Իր կեանքը ոչինչ ունէր բռնուղբօսիկ . էր խոկալէս ինչպէս որ էր, ստորութեանց, միջակութեանց մարկին թշնամի, արտասովոր կերպով սքեմիտ, յամառ վիճաբանող, ճշմարտութեան պաշտպան, գեղեցկին սեջիւ սարսափող, լացող, գօրաւոր յուզումները փնտռող, զանոնք վայելելու համար անոնցմէ ցնցուելու, անոնցմով գինովնալու, զանոնք ալ փորձելու, անոնց ալ փորձառութիւնը ունենալու տենչէն արբչիւ : Օղիով, խունկով կը գինովնար. բուրգերուն ստորտը կը թափառէր. ակինքսի ոտքերուն տակ իր հօրը մահուան ստուգութիւնը կը վայելէր. մեծ քաղաքներու յորձանքներուն մէջ մարդերու փոքրութիւնը կ'ողբար :

[Վերջը Յաջորդով]

ԱՐԱՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՏԱՐԵՑՈՅՆԵՐԸ Բ.

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՐԸ. — ԹԵՂԵԱՆ

Ճմարտապէս «Տարեցոյց»ի ծրագիրով ու յղացումով առաջին հրատարակութիւնը՝ Թեղեկի Ամէնուն Տարեցոյցն է։ Իր բազմաշխատ ծրագիրին, հրապարէչ մէթոտին՝ կը միանայ օրինակի յաջողութիւնով գործադրութիւնը, որով կը կնապէս կը շահէ գործը, աւելցնելով իր արժէքը։ Ամէնուն Տարեցոյցին ամէն էջերը հաւասարապէս առարկայ եղած են նրախիզ խնամքի մը, և կարելի չէ ընդհանրապէս գտնել էջ մը՝ որ սեւեռուելու համար լեցուած ըլլայ, կամ շահեկան, նոր, ընթերցելի ծանօթութիւն մը չպարունակէ։ Ամէն նիւթ կ'ընդգրկէ ան, և իր ամբողջութիւնը ունի բնոյթ՝ առարկայ մը համայնագիտարանի, ուր ընթերցողը բոլոր փնտռածներուն կը հանդիպի։ Ինքին հակառակ շխտատութիւն մը՝ խմբագրութիւնը այս Տարեցոյցն, որուն իրականացումին համար յարեան համբերութիւնն աւելի բան մը պէտք է, — անսահման լայնարտութիւն և անխնայ յարատեւութիւն, արժանիքներ՝ որոնց Թեղեկի քաջաբար հեղինակ կը հանդիսացնէ ինքզինքը իր գիրքին մէկ ծայրէն միւսը, Խճողում, ծանրաբեռնում, միօրինակութիւն չէ՝ որ կը տիրեն հոն, որպէս զի աղակապէս ընթերցողը քանի մը էջի ընթերցումէն ետքը՝ Պէսպասութեան և զանազանութեան է որ մասնաւոր ուշադրութիւն յատկացուած է հոն, դրեթէ ամէնքն ալ պատշաճեցուցուած օրուան տոխիթի մը։ Տահէկան ծանօթութիւններու, հետաքրքրաշարժ գիտելիքներու և տեղեկութիւններու անսահման մշտնջրի մը կ'ընկերասան գեղատիպ լուսանկարները մեր ծանօթ ու համակրելի գործերէն մեծ մասին, յաջորդուած իրենց յօդուածներով, յատկապէս Տարեցոյցին համար գրուած ու անտիպ, ինչ որ ա'լ աւելի հրապարէչ կը դարձնէ զայն, և ինչ որ արդէն կոչուին է անոր։ Այս բոլոր շնորհասրելի արժանիքներուն՝ Վ.

և Հ. Տէր-Ներսէսեան ապարանք աւելցուցած է հիանալի խնամքով ապագութիւն մը, որ արժանի է բարձր գնահատութեան։ Անճատ նիւթերու շարքէն զատ, ստորագրուած գրուածքներու թւումին համար պէտք պիտի ըլլար գրացուցակ մը շինել։ Այդ անհնարութեան առջեւ, կը բաւէ միայն ծանրանալ զխառնոր յօդուածներուն վրայ, յիշատակելէ ետքը Տարեցոյցին մէջ ցանցնուած այն պղտիկ գրուածքները, զորս ստորագրած են, էջերուն կարգովը. — Յ. Արփիար, Հրանտ Նաղարեան, Աղեքո. Փանոսեան, Հր. Տանձիկեան, Տօթ. Ս., Արշակունի, Թեղեկի, Յ. Պ., Զ. Ասատուր, Ռ. Յ. Պէրպէրեան, Գր. Զօհրապ, Մեսրոպ Նուպարեան, Յ. Յ. Պարոնեան, Եր. Տ. Անդրէասեան, Ս. Թիւթիւնճեան, Գր. Վանկեան, Տ. Զրարեան, Կ. Ոսկեան, Եղ. Եպսկ. Գուրեան, Եր. Մաղխասեան, Տօթ. Սամուէլ Խան, Ռ. Որբերեան, Վ. Փափագեան, Գառմէն Սլիվա, Ատնցմէ գուրս բնդարձակ գրուածքներ ունին գրականութեան հին ու նոր դէմքեր։

Եղբէ Եպսկ. Գուրեան Ս. Գիրքի գրուածքներէն «Ներուած»ի մը խորհուրդը կը պատկերէ, տաղաչափուած քերթուածի մը մէջ, այն պերճախօսութիւնով, զոր սրբազան գրագէտը կը գնէ իր տաղերուն մէջ։

Պէրպէրեան կը վերլուծէ «Հիացում»ին հոգեւանութիւնը ու գերը կենքի ու գեղարուեստներուն մէջ, փորձ գատնաբակի խմբագրութեան խորհուրդը։

Սիրանոյշ, — ծանօթ տաղանդաւոր գեղաստանուհին, — զմայլելի գրուածքի մը մէջ, որ Տարեցոյցին ամէնէն գողարկի էջերէն մէկը կը կազմէ, կը պատմէ իր պատրաստութիւնը, Շէքսպիրի գլուխ գործոցներէն մէկուն, և զայն բեմ հանելը, նկարագրութեան հրապարակ մը ու բացատրութեան թովշութեամբ մը՝ որ խօսակցութեանն ալ տիրական հմտքն է Վովկասի Հայ բեմին զարդը՝ մեծ արուեստագիտուհիին։

Տէմիրճիպաշեան անճատ խօսքերու մէջ կը խառնէ գաղափարներ ու մտածումներ, խորհրդապաշտ ու խմբատուն այն շէշտով, որ իրն է։

Մուշեղ Եպիսկոպոս «Մեծութեան ճամբան» հեռագրատիկերով հայեացքի մը մէջ՝ կը բանայ զայն քողարկող վարագոյրը, նկատողութիւններով՝ որոնք մոտ-ծել կուտան:

Յ. Ալփիար, «Թօթօ»ին ուղղուած «Խօսքեր»ու մէջ, կնքութեան գաղտնիքը կը դասարանէ, քողարկել ու անսանձ այն սրարանութիւններով՝ որոնց տաղանդաւոր պատկաւորն է:

Մեքսիկայ վարչապետ կը համոզէ թէ «քննութեանը հոգեկան անունդ է»:

Յովհ. Գաղանձեան «Լեզուական Գոհարներ» երեւան կը բերէ ժողովրդային բարբառին մէջէն:

Գրուածքներու այս կտրիկն, Ե. Արմէնի «Նիւթի Զոհ»ին վրայ լուսարանութեան մը համար լի, հեղինակը պէտք կը տեսնէ գիտել թէ՛ ան ո՛չ գրուած է 1909 թ. 1 ին, ո՛չ մարտ 29ին, — ինչպէ՛ս ալ կը գուշակէն չթուադրուած գրուածքի մը ե՛րբ գրուած ըլլալը օրով - ամիսով, — և ո՛չ ալ կը պահէ իր բնագրական հարազատութիւնը, որ մէկ էջի մէջ սղմեցուելու անիմաստ ճիգի մը խտացումին զոհուելով, շեղած է այն սկզբնական իմաստէն, զոր նիւթին յարակից իմաստներով արամարանաւոր ամբողջութեան մէջ կարելի է գտնել:

Չիքիթե-Սարաֆ «Պոլսական Տեսարաններ»էն «Մօտա»ն կը նկարագրէ յաջողապէս, նկարչական վրձինի մը նուրբ ու մանրամասնուած երանգներով. իր նկարին մէջ կը պակսի սակայն նիւթը՝ որուն պէտք է յանգի նոյնիսկ պատկերի մը ոգին, անզգալարար, տեսարանին նկարչութեանը հետ:

Տօմնոյ յաջող հոգեբանութիւնով մը կը պատկերացնէ ընտանեկան բարքերու կենդանի դրուագ մը, մէկը այն տեսարաններուն՝ որոնք ասիւզափ յաճախաբէպ կերպով կը խաղացուին Հայ սալօններու վարագոյրներուն ետեւը քողարկուած:

Տ. Զրաքեան կը վերլուծէ իր խորհրդապաշտ զգայութիւնները «Նկար»ի մը առջեւ, աղայութեանը և ետքի ժամանակներու մէջ:

Բ. Պօղաճեան «Արեւելեան Հին Գոր-

գեր»ու վրայ պատմական տեսութիւն մը կ'ընէ:

Տարեցոյցը կը փակէ Թէոփիլ՝ իր «Տարեցոյցի Աւանդակէ»ով, ուր պլաւանական իմաստի մը տակ՝ դարունին փառքը կը խորհրդապատկերէ:

Ամէնուն Տարեցոյցն, իր ամբողջութեանը մէջ աննախնիաց կատարելութիւն մըն է, և, գոնէ ստոյ՛վ արժանի պատկերու աշխատութիւնը հեղինակին, որ իր ժամանակը և կարողութիւնները Տարեցոյցի պէս նուազ գրագիտական գործի մը արամարկելու զօհողութեանն է զիջած:

Ինչ որ միայն թեթեւօրէն կը խաթարէ Տարեցոյցին ամբողջական համակերպի բովանդակութիւնը, շուայունքն է բարեկամական այն փառքը իջ փայտաշիններուն, որոնցմով Դեմիւրու կարգը անցուցած է Թէոփիլ կարգ մը անձնօթներ, — պէտք է անուանել, — և անոնց մէջ մէկ ամօռ տուած՝ ի՛րապէս այդ տիտղոսի արժանի անհատականութիւններու ըմբ:

Ե. Ա.

Գ. Ե. — Տարեցոյցներու այս շարքը կ'ամբողջանայ երկու ուրիշներով, — Հեւանդանոցի ԸՆԴԱՆԸ (Յ) ԱՆՈՐԱՅԻՆ Ե ԺՈՂՈՎՐԴԱՍԿԱՆ ՏԱՐԵՅՈՅԸ, որոնք դրական տարազեղութիւններով իրենց ընդթով, գրախօսական ըննութեան մը իրաւունքէն կ'ապահարկուին: Ընդարձակ Օրացոյցը հրատարակութիւն մըն է պլապէս օգտակար, քան գրական օժիտներով գիրք մը: Ընթացիկ վիճակագրութիւններու, վարչական կեանքի վրայ կարեւոր տեղեկութիւններու ամփոփում մըն է ան, իր այդ ծառայութիւններով միայն օգտակար: — Ժողովրդական Տարեցոյցը, այս ամէնուն ետեւէն, կաղն ի կաղ, ճօրճարով վազվազ յետաձգեց ուղեւոր մըն է, իր ճամբուն մէջ շուարուն: Անճրագիր, անկազմակերպ, անմէթոս ժողովածու մը ամէն փնտռուած ու չփնտռուած ալ բաներու, զուրկ գրական արժէքի մը յետին նշյոյլէն, որուն արդէն յաւակնիլ չէ եղած մտասեւեռումը հրատարակչներուն, որչափ ժողովրդական դիւրահաս ճաշակները գրուող հատոր մը մէջտեղ հանելու փառքը:

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՄԻՍԿԱՆԵՐ

ՉԱՅՆԵԱԿՆԵՐ

Չայնեակները յառաջ ունին իրենց գուարնալի կողմը: Հետեւեալ երկուքը, ըլլալով ինքնին կասարեալ ձայնեակներ, ամբողջովին կազմուած են միալեզու բառերէ, եւ ժամանակէն մէջ իրենց ունեցած հրապոյրը բան մը չկորսեցներ արժէքն: Հայ ընթերցողին աչիքն:

Աղջնակ մը նստած է սեղանին զլուխը: Ճամն մը կը քոչի սպուրի դգալին շուրջը: Տղեկը հեղանական արձնելուքեան մը շեշտով կ'ըսէ.

Touche

A

La

Louche,

Mouche ! —

Ah!

Ma

Bouche!

Դիւրաւ կը գուշակուի վերջին տղերէն թէ՛ նամքը քառած է աղջնակին բերնին անկիւնը: Ան կը սպառնայ.

Je

Te

Pince! . . .

Եւ կը փորձէ զայն բռնել, երեսին սպսակ մը իջեցնելով.

Vlan!

Բայց նամքը քառած է: Տղեկը իր զարմացումը ու արձնելուքին կը յայտնէ սա բացազանքութիւնով.

Mince . . .

Յետոյ զայն կը հալածէ եւ քարկիովը կը հարուածէ:

Pan!

Միացուցե՛ք այս տղերը եւ կարգե՛ք ամբողջովին: Կասարեալ կասակերգութիւն մըն է՝ ան, հիւանդի,

բնականութեամբ ու կեանքով զեղուն: Աւելի գուարնալի է՝ ան, քան ճարտանի ստակ մը:

* *

Ողբերգական այս ձայնեակէն ետք, եղբերգական ձայնեակ մը, մայրական սէրի բանաստեղծութիւն մը.

Մանկամարդ մայրը նախ խօսքը կ'ուղղէ սննունին.

Qu'on

Change

Son Lange!

Յետոյ տղեկին

Mange

Mon

Bon

Ange.

Յետոյ կնոջ մը.

Trois

Mois

D'âge!

Այսինքն «երեք տարու է, տղեկն»:

Ու վերջապէս.

Sois

Sage,

Bois!

Ի՛նչն Վալասինն է այս ձայնեակը, որ կասարեկութիւն մըն է:

Մէկը պիտի կրնա՞ր փորձել տառնմանութիւն մը՝ հայերէնի մէջ:

— o : —

Ի՛նչպէս գրուած են

Միւստի «Souvent»-ը եւ «Sazon»-ը

Գիշեր մը, Թեաքը-Իրաքիէն գացած էի, կ'ըսէ Միւստէ: Միջառաքի պահուն, նրբանցքներէն մէկուն մէջ հանդիպեցայ կնոջ մը, որուն աչիքը իմինքեւ գրուեցին պահ մը. բայց նոյն պահուն չկրցայ յիշել թէ՛ ո՛ր տեսած էի զինքը. անձամբօրոնիքն անունը հարցուցի. պատասխանեցին ինծի թէ Ժօռմ Սանն էր ան: Անմիջապէս ձգեցի քստոնքը, խիստ յուզ-

ուած. տուն վազեցի, սենեակս Բաշուե-
ցայ ու Յիշասակը գրեցի:

Ո՞վ չգիտէր Միսէի նուրբ բանաստեղ-
ծութիւններէն «Adieu Suzon»-ը, որ ամե-
նամաքուր ու ամբիժ սերի մը բերքուածն
է: Ո՞վ չափի ուզէր զիսնալ ուրեմն քէ
ինչպէս գրուած է ան. Միսէ իր հօրեղ-
քօր բարեկամներէն մէկուն տունը՝ զիւղի
մը մէջ՝ հիւր գացած էր. գեղեցիկ, նմայիչ
ու համբաւի արեւայտով մը պսակուած,
ամեն սեղ կը փայլէր Միսէ, ամեն կողմ
քրքաւցնելով երգեր՝ ա՛յնքան փայփայիչ
կիներուն համար: Գեոասի աղջիկ մը այս
«կապոյտ քոչուն»ին երգերէն հմայուած
ու խելայեղօրէն սիրահարուած, զիւր
մը կրէս ու բոճանքէ ձգուած, ներմակ
երջագգես մը հագած՝ Միսէի սենեակը
եկաւ: Բանաստեղծը փոխանակ քեւերը
բանալու՝ ծուկի եկաւ. սխալացաւ անոր
հիմնալի մագերուն վրայ, բայց չի բախեց
զանոնք. հոստեց վարդը՝ բայց չփերքեց
անոր քերքերը ու անխոհեմ աղջկան
ձեռներ սեղմելով, խօսեցաւ երկարօրէն
ու մեղմի: Ուրբ երկար զիւրերէն՝
շարունակաբար աղջիկը եկաւ սէրէ մագ-
նիստացած ու անդիմադրելի ձգողութեամբ
մը Բաշուած Միսէին: Միսէ սակայն
ուրբ զիւրէն ալ զսպեց իր մէջ ձայն մը,
նկատելով որ օգտուիր այս տեսակ խելա-
յեղութենէ մը՝ գարեելի սրբապղծութիւն
մը պիտի ըլլար. միմակ իր ամբողջ եռա-
ցող ու կրէս սէրը խելոյեց գրելով «Միւ-
զօն»ը, որ արձագանգն է իր պղատնակաւ
ու չապրուած զգումներուն:

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Գեղարուեստ եւ նախապաշարում

Մարբի-Քէոյի Հայ ընտանեկան շրջա-
նակներուն մէջ այս միջոցիս յուզումով
կը խօսուի եղեր զայնակողութեան մը
վրայ, որուն հեղինակ հանդիսացած է քիչ
մը խիզախ նկարագիրով աղջիկ մը:
Օրիորդին արարքը՝ որչափ երեւութապէս
ընդվզեցուցիչ ու յայտուած, նոյնչափ օկո-
բունքին մէջ ծափահարելի է ու արժանի

դաս մը նախապաշարումի անյողողոյ-
սցիսութեամբ անուղղայ միտքերու արժակ-
ուած: Իրենք զիրենք զարգացած ու
հայ-լայժ ձեւացող մանուկսի մը մէջ՝
օրիորդը կը հրաւիրուի դաշնակ զար-
նելու, Արուեստագէտի իր համբաւն է որ
կ'արձնցնէ այդ փափաքը ներկաներուն
մէջ: Օրիորդը կ'ընդունի առաջարկը, եւ
հազիւ սկսած լսելի ընել դաշնակին
ձայնը, ամէն անկիւններէ աղմուկ մըն
է կը փրթի, խանդարելով իր եղանակը
Ուրիշ մը քանի սեղ չափի դնէր մեր սա-
լօններուն սովորական այդ անփայլ վար-
մունքը: Բայց ան չկրնար հանդուրժիլ,
ու ձգելով դաշնակը, կը հեռանայ, արհա-
մարհոտ դժգոհութեամբ Խրառնցումը ու
զայնակողութիւնը մեծ կ'ըլլայ: Հիմա ամէ-
նուն քերանք ինկած, անուր չարախօսու-
թեան մը առարկայ է դարձեր ան գեղին
Հայ ընտանիքներուն մէջ: Պարտախնով
զատուած, իր վարմունքը սակայն ճշմա-
րիտ նամբան է՝ ուղղութեան հրաւիրելու
համար աւանդապաշտ սգէտներ, որոնք
չեն կրնար անհաճոյ իրենց ռա-
կութիւնները թօթափել զիսնալ, Իր
արարքը նախապաշարումի երեսին շաչեց-
ուած հոյակապ ապսակ մըն է, արժանի
սրտազին ծափահարութեան:

Պռալօ՝ Օրիորդ:

— օ : —

օ : Մօտ օրէն հրապարակ կ'ելլէ Ռ Յ.
Պէրգլերեանի Գլարոց եւ Գլարոքին աշ-
խատարանի իւր, որ շարք մըն է
ընդարձակ անշատ տեսութիւններու՝ մանկա-
վարժական, գրական եւ զատառարակա-
կան հարցերու վրայ, շահեկան ամէն
ընթերցողի ու գրասէրի համար:

օ : Մեր շնորհակալութիւնները՝ Հան-
րագիտակ, Դասիկ, Բարակն եւ Աւետարե-
րաբանութիւններուն, որոնք համակիր
ողջերով ողջունեցին Մատախի վերերե-
ւումը:

օ : Սքանկուլի մէջ, յօղումագիր
մը, Ապէլ, ռուսումնասիրութիւն մը կը
նուիրէ Հայ գրագիտութիւնի Տիկին Խոսկունի
Միսնայի, որ ֆրանսերէն պատմուածքներ
կը գրէ սեղակաւ օտար թերթերու մէջ, եւ
որ ունի նաեւ իսպաիլերէն թարգմանու-
թիւններ: Յօղումագիրը խիստ դուռա-
սայից տղերմով վեր կը հանէ Հայ գրագի-
տութիւնի ստանդը, իբր կարող վիպասան:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻՆՃԵԱՆ: Արտօմսէր. ՏՕԲԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ:

ՊԱՐԳԵՒԱԽՈՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիսի բաժանորդագրութեան մէջ, ընթերցողները օժտելու համար գրական հրատարակութիւններով, հաստատած ենք նուէրներու դրութիւն մը, որ հաճելի ու շահաւէտ առիթ մը կրնայ ըլլալ ամէն ընթերցողի համար: Դեկտ. 1 էն մինչեւ երկու ամիս Մասիսի բաժանորդագրուիլ փութացող ո՛ր եւ է ընթերցող՝ իրաւունք պիտի ունենայ անմատու երկու գրական հատորներ՝ օրուան ամէնէն այժմէական հրատարակութիւններէն, իրենց ընտրանքին համեմատ:

Այդ հատորներն են

ՅՈՒՐԵՐ.	— ՍԻՊԻԼ	Գիւն 5 դր.
ԵՐԵՈՒՆԵՐ.	— ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	» 5 »
ԿՆԵՐ.	— ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ	» 5 »
ՆԵՐՍԵՍԱՐԷ.	— ԻՆՏԲԱ	» 12 »
ԱՆՐԱՅԱՆԵՐ.	— Մ. Ա. ՊԱՐՍԱՍԵԱՆ	» 5 »
ԼԵՈՒԱՆԻ ԳՆԱՐ.	— ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	» 5 »

Մինչեւ երկու ամիս կը տւուէ պայմանաժամը այս պարզեւտոր բաժանորդագրութեանէն օգտուելու առիթին, որմէ ետքը բաժանորդագրուողները չպիտի կրնան նպատաւորուիլ անիկէ: Իսկ անոնք որ փութեան մինչեւ այդ պայմանաժամին լրումը բաժանորդագրուիլ Մասիսի, առանց որ եւ է բացառիկ վճարման, վերելի հրատարակութիւններէն՝ իրենց ընտրանքին համեմատ իրաւունք պիտի ունենան անմատու 10 դրչ. հոյ գիրք, զոր թղթատարի ծախքը (3 դրչ.) մեր վրայ՝ պիտի փութայնենք իրենց հասցէին՝ իրենց բաժանորդագրին ին տաքման յաջորդ թղթատարով: Յայտնապէս զգալի է թէ, անուղղակի կերպով 13 դրչ. ի գեղջ մըն է Մասիսի բաժանորդագրութեան վրայ նուէրի այս դրութիւնը, զոր հաստատած ենք՝ հիմնապէս զխրոմատչելի և ածան ընծայելու համար Մասիսի բաժանորդագրութիւնը, և ընթերցողները օժտած՝ վերջին ամէնէն փնտռուած գրական հրատարակութիւններով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիար Գէորգ Արաճամեան: — Ստացանք շնորհակալութեամբ Ձեր բաժանորդագրինը և զրկեցինք Մասիսի պարզեւտորէն Ձեր ընտրած գիրքերը: Նոյնպէս: — Տեարք ՄԷԼԸՈՒ ԽՆԱՏԱՄԵԱՆ, Սահակ Օտարաշեան, Յարութիւն Ճամճեան, Իսքէնաշէր Տիւլիէրեան, Արշակ Մանուկեան, Արրահամ Կարմիրեան, Նշան Իսպէչէրեան, Սարգիս Տ. Գրիգորեան, Աշոտ Նշատաճեան, Մարգար Մինասեան, Յակոբ Թաչճեան, Արթաքի Զարֆճեան, Լիւոն Գարակէօղեան, Անդրանիկ Տ. Անդրէասեան, Մինաս Պարոնդպանեան, Խաչի՛կ Խաչատուրեան, Յարութիւն պատմաճեան, և Օր. Արմաւենի Կարապետեան:



Ձեռքի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմյաջին Սինկեր Ընկերութեան
վաճառատուններուն մէջ:

ՆԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------------|---|
| ԿԱԼԱԹԱ | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի գէմ, Թ. 343 եւ 343 |
| | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւնէին գէմ. |
| ԲԵՐԱ | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | 2. Գարաքէօյ, Թրամէլէյի կապարանին գէմ. |
| ՊՈԼԻՍ | 1. Սուլթան համամ. |
| | 2. Սուլթան Պէյաղլար, Թրամէլէյի կապարանին գէմ. 13. |
| ՍԱԻՍԱԸ | Չարչը Պօյու, Թ. 120. |
| | Դասեր եւ նորոգութիւնները ձրի. |

կատարելաբար երաշխաւորուիւն:
Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
Փողոց, Թիւ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:
(3—10)

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւսնա-
դուլթիւններէ զատ, մասնադի-
տարար եւ երկար տարիներէ իվեր
կը գործանէ տառաւորի, աղիք-
ներու միջոցին, ճամբաներու հիւսնադուլթիւնները, ջրային տնտեսութիւն-
ները, հին եւ նոր գաղիական տխտերը: Այս վերջին տխտերը առանց
տառաւորի խանգարման եւ նորադոյն մեթոտներով կը բաժէ կարճ մի-
ջոցի մէջ: Հիւսնադ կ'ընդունի ամէն օր կէմ օրէ վերջը: Չորեքշաբթի
օրերը միայն ձրի: (3—10)

Անկարելի է որ ընտանիք մը առանց
կարի մեքենայի մնայ, բայց էտկան կէտն է
լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծա-
ւայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ
գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգո-
հութեանց եւ տաղտուկի ազդեւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ
The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ա-
մէնէն աւելի կատարելագործածածը, հոս-
տատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝
բաւանդակ աշխարհի մէջ՝ ամէն օր Սինկերի
մեքենաները կը գնէ:

ԱՐՐԱՀԱՍ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Ձ Մ Ի Տ

Կը ստանձնէ

Հրդեհի և ծովային ապահովագրութիւններ՝ շահաւէտ պայմաններով :
Ամէն տեսակ գումարների գործեր, ներածում, արտածում և մաքսային
գործադրութիւններ :

Եւրոպական առաջնակարգ գործարաններու միջոցաւ՝ գունաւոր և սպորդ
պատկերադարձ քաւթ—փոսթալներու պատրաստութիւն, ֆոթոկրաֆի
համեմատ :

Կը հալարարէ

«Թումա Սքրումոր» Անգլ. Տան դրամարկներէն :

Սաքսոնիայ առաջնակարգ բիւնճներ՝ շաքարեղանի վճարումներով :

Ամհառակերպին դրութեամբ պիսիկներ :

Ամէն տեսակ երկրագործական և թիթեղագործի մեքենաներ :

Ուղում թանկութեամբ և տեսակով ընտիր և հոտաւէտ թէյեր :

Գումաւային յանձնարարութիւններ փութով կը կատարուին :

Հասցէ՝

ԱՐՐԱՀԱՍ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ, Իզմիս

(3-10)

ՌՕՍԻԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐԿԱԾՆԵՐ

1881 մարտ 20-ի Կոյս. Ուքադով արտօնուած :

Կեդրոնաւանդին Բեդերսպուրդ, իրեն յատուկ շէնքը :

Ընկերութիւնը խիստ նախատաւոր պայմաններով ապահովագրութիւններ
կ'ընդունի :

ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒ, Բնչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կտարուե-
լուն գէմ :

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,666 ֆր.ք.

Երաշխատութեան գումար աւելի քան 149,852,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած

դրամագլուխ և վնասներու հատուցում 355,840,000 »

1903 տարուան մէջ դանձում ապահովագրին և տոկոս 64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել՝ Կ. Պոլսոյ մասնաճիւղին,
Աղաբեան խան, Վոյվոտա, Ղալաթիա :

(3-10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսի և գաւառներու համար տարեկան

60 դրշ :

Արտատաճմանի

»

»

14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին տանալու մեր պարզեանքէն ձրխալար երկու գիրք, իրենց ընտրանքին համեմատ, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Զհրատարկուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ եւ է գրութիւն ուղղել Խմբագրութեան հասցէին .—

در قديم باب عالي جاده منوره نوسر ٥٢ « ماسيس » غزه ي ادره مانه

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ » Ի

Պապը-Ալի ճասսէսի, քիւ 52. Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue „MASSIS“

Avenue de la Sublime Porte, No. 52.

CONSTANTINOPLE

ԶՈՒԱՐՋԱԼԻՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ

Բաղդասեցէք ու տեսէք

Կարդացէք ու համարուեցէք

Թե միշտ աւննման է

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ

1907 — Գ. ՏԱՐԻ

300 էջ, 10 Պատկեր. Գին . . . 64 . . . 5 դրշ .

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ !!!

Յօդուածներ՝ մեծագոյն գրողներէն

Սրամսուքիւններ՝ ամենէն համովներէն

Զուարհալիներ՝ ամենէն զուարթներէն :

Հատորը՝ փառաւոր և պատկառելի .—

Պատկերները՝ մի՛շտ անմնան և անհաւատարկի

Կը ծախուի ամեն տեղ՝ եւ նաեւ ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ գրասունք. Կ. Պոլիս:

(3—10)